Ղաբլաման. *լայն փիալաձև աման է, առանց ունկնի կամ երբեմն ունկնով. ունենում է* **ղափախ**՝ *կափարիչ։ Գործ է ածվում առավելապես մեղրի համար։*

Ճրշfամի, ճաշfամի[8] *կամ* **փրլիֆfամի, փլվfամի**. **ծակոտկեն** *ուռուցիկ հատակով լայն աման է, նեղ* **լյաբով**, *փլավը, ձավարը և այլ եփած հատիկավորները կամ կանաչեղենը քամելու համար։*

Քյավգիր. ծակոտկեն, *լայն և տափակ շերեփ։*

Բօխշաբ. *պղնձե ափսե, բայց համեմատաբար լայն* **լյաբով**: *Լինում են ծրես և խոր* **բօխշաբնէր**:

Ջամ. *խոր թաս, առանց ունկնի, օղակ-պատվանդան տակով՝ ջուր խմելու համար. երբեմն մեջը նաև մածուն են մերում կամ նրանով կաթ հրամցնում։ Առանց տակի պատվանդանի և համեմատաբար ավելի խորը կոչվում է* **փիալա**:

Փարչ. *նույն նպատակին է ծառայում, սակայն ավելի խոր է, անպատճառ ունենում է ունկն և պիտի լինի առանց տակի պատվանդան հավելվածի։* **Կիսափարչը** *գործ է ածվում և որպես օղու թաս և առավելապես՝ չափ։*

Սաթիլ. *բարձր պտուկաձև փոքր կարասի ձևով աման է, որի պռնկին ամրացված է շարժուն երկաթե աղեղ՝ բռնելու համար։ Հարմարեցրած է հատկապես հեղուկ կերակուր՝ կաթ, մածուն, մեղր տեղափոխելու, երբեմն* **մատղի** *մսի ջուրը բաժանելու համար։*

Քըբավր՛ր, կօբավօր[9] *կամ* **բավա**[10], *լայն հարթ հատակով, գրեթե ուղղահայաց կողերով և երկար կոթով աման է. մեջը պատրաստում են* **յէղուծուն**, *տապակում են միս, բովում են սոխը և այլն։*

Աբիգյարղան՝ fըբավօրից *ավելի խոր է լինում և ավելի սրակող պռունկ է ունենում. նրանով ածում են հեղուկը մեկ ամանից մյուսը։*

Կերակուրը մատուցանելու **խօնչանէր** *սարքելու համար կան հատուկ մատուցարաններ՝ կլոր* **մյաժմյաճինէր** *կամ* **սինինէր** *փոքր ու մեծ տրամագծով, սակայն այն մեծությունը չունեն, ինչ որ հաճախ ունենում են արևմտահայերի մոտ, որտեղ նրանց վրա պատրաստվում է* **սէղան** *մի քանի մարդու համար։*

Պղնձից է շինված **ճավյանգ դաստան**—*աղ, շաքար, ընկույզ, կաղին և այլ կարծր իրեր մեջը ծեծելու և մանրացնելու, փոշիացնելու համար։*

Փայտե ամաններ: *Նրանց մեջ իրենց մեծությամբ առաջին տեղն են գրավում* **տաշտէրն** *ու* **խնօցինէրը**:

Տաշտ. *ունենում է մեծ կամ փոքր ծավալով քառանկյունի խորություն, բարակ կողեր, հավասար հատակ և աջ ու ձախ կողմից* **ճափանէր**՝ *տափակ թևեր։ Խմոր հունցելու և ցորեն լվանալու տաշտն ավելի մեծ է։ Լվացքի համար գործ է ածվում համեմատաբար փոքրը՝* **տաշտակը**:

Խնօցի. *Զանգեզուրում գերազանցորեն շինվում է փայտից և կախովի է։*

Զափազանց բազմազան և ընդարձակ գործածություն ունեն **չարխավ** *պատրաստած* **քյաfճանէրը**՝ *խոր ափսեանման ամանները, առանց* **լյաբի**, *պռունկները հաստացրած։ Մեծությունը երբեմն հասնում է* **լյագյանին**: *Գործ է ածվում նաև որպես* **խաշին քյաfճա**՝ *խաշը պահելու համար, որպես* **չօրբաճարի, գյավաթ**, *կշեռքի թաթ, չափ՝* **կյուշ** *կամ* **դիգճակյուշ**: *Վերջերս* **քյաfճայի** *հատակի կենտրոնում ճախարակում են տափակագլուխ ցցվածք, որի վրա*

[8] *Գորիս։*

[9] *Գորիս։*

[10] *Կապան, Սիսիան։*